Արձանագրություն N 3
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծաղկային կոմպոզիցիաների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10.01.2020թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սահակյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Նալբանդյան /գնահատող/, Ն. Հարությունյան /գնահատող/, Հ. Վարդերեսյան /բացող/
Բացակայում էր՝ Լ. Ղարիբյան /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

**1. Ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանության շտկման մասին**

---

(Մ. Սահակյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

- ԻՄՊՈՐՏ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը և մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ - 0:*

**2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին**

---

(Մ. Սահակյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու նպատակով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հետ կանցկացվեն գների նվազեցման բանակցություններ: Սահմանված կարգով հայտ ներկայացրած մասնակիցներին ծանուցել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին, որը կանցկացվի 16.01.2020թ. ժամը 11:00-ին:

2.2 Գնման ընթացակարգը ընդհատել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստը՝ 16.01.2020թ. ժամը 11:00-ը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

**3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Մ. Սահակյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 16.01.2019թ. ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------------- Մ. Սահակյան

Անդամներ՝ ---------------- Ա. Նալբանդյան

---------------- Ն. Հարությունյան

---------------- Հ. Վարդերեսյան

Քարտուղար՝ ---------------- Ն. Կիրակոսյան